



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

<< >> _____ 2019թ.
N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՈւՂԵՐՁԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՂԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ
ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի շիրակցիներ

Աղետալի երկրաշարժի ավերածությունների հետքերը, հազարավոր անմեղ զոհերի հիշատակն ու մեզ բաժին հասած դառնությունները դեռ ապրում են մեր սրտերում: Շիրակի մարզը, որ կորցրեց իր բնակելի ֆոնդի, արտադրական հզորությունների, կրթամշակութային և սոցիալական կառույցների գերակշիռ մասը, երեսունմեկ տարի անց դեռևս շարունակում է ձերբազատվել աղետի հետևանքներից: Հիշատակի այս օրը ևս մեկ անգամ առիթ է երախտիքի խոսք հղելու այն երկրներին ու մարդկանց, որոնք մեզ բաժին հասած ողբերգության առաջին իսկ օրվանից աջակցեցին ու սատարկանգնեցին:

Զարգացման նոր ուղի ընտրած Շիրակն այսօր սոցիալական հրատապ խնդիրներ լուծելուց բացի, փոփոխություններ բերող ծրագրեր կյանքի կոչելու վճռականություն ունի: Իմ խոնարհումն անմեղ զոհերի հիշատակին:

Աստված պահապան մեր հայրենիքին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ